ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ԱՐՄԵՆԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀՆԱ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (ՀՀ ՆՅՈՒԹԵՐՈՎ)

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Մելսիկի Մկրտչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Հրանտ Արարատի Բագրատյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Վահագն Ստեփանի Լալայան

Առաջատար կազմակերպություն՝ **Երևանի պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի օգոստոսի 05-ին, ժամը 14^{00}-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի հուլիսի 06-ին:

008 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար **տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ի.Բ. Պետրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ժամանակակից տնտեսական իրականությունը հետազոտելիս տնտեսագետները դուրս են բերում և առերևսվում են տնտեսական աճի և հասարակության բարօրության միջև կապի խզումը փաստող տարբեր էմպիրիկ ապացույցների: Վերջիններս փաստում են, որ երկրի տնտեսության համալիր ուսումնասիրության տեսանկյունից միայն քանակական գնահատականները բավարար չեն, քանի որ, տնտեսական աճի բնույթը ենթադրում է ոչ միայն քանակական, այլև որակական փոփոխություններ: Վերջիվերջո տնտեսական աճի արձանագրումը, թիրախավորումը և պլանավորումը ինքնանպատակ չեն. դրանք միտված են հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև աճի նոր հնարավորությունների ստեղծմանը: Այդպիսով երկրի զարգացման մակարդակը գնահատելու խնդիրը վերջին տասնամյակներին ազգային եկամուտների հաշվառումից տեղափոխվում է դեպի մարդակենտրոն չափումների հարթություն: Այս համատեքստում գիտական ջանքերն ուղղված են աճի ոչ թե քանակի, այլ որակի գնահատմանն ու բարելավմանը:

Տնտեսական աճի որակի նկարագրի մեջ հատկապես կարևոր են տնտեսական արդյունավետության դրսևորումները, քանզի ժամանակակից աշխարհում գործնականորեն տնտեսական աճին ամենամեծ նպաստում ունեցող գործոնն արդյունավետությունն է: Այն կարևորագույն եզրույթ է թե՛ միկրո, թե՛ մակրո մակարդակներում, թե՛ մրցակցությանը դիմակայելու և շուկայում կայուն դիրք պահպանելու, թե՛ աճի նոր հնարավորությունների ձևավորման խնդիրների լուծման հարցերում:

Այսպես ՀՀ-ում տնտեսական արդյունավետության գնահատման տարաբնույթ մեթոդների կիրառումը և տնտեսական աճի հետազոտության քանակականից դեպի որակական չափումների անցումը, ինչպես նաև այդ երկու տնտեսագիտական եզրույթների փոխառնչությունների դուրսբերումը կարող է ոչ միայն օգնել ՀՀ տնտեսական աճն առավել արդյունավետ և որակյալ դարձնելու քաղաքականությունների մշակման գործում, այլև հիմք հանդիսանալ տնտեսության որակական բնութագրիչների ուսումնասիրությանն ուղղված նոր հետազոտությունների համար:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության և տնտեսական աճի որակի վերլուծությունն ու գնահատումն է: Նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել արտադրողականության և տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային փորձը, դուրս բերել առավել տարածված մոտեցումները և մեթոդները, դրանց միջոցով գնահատել ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը, դրա դինամիկան և կառուցվածքը,

- բացահայտել ՀՆԱ արտադրության արդյունավետության դերը տնտեսական աճի որակի ձևավորման և դրսևորման գործընթացներում,
- բացահայտել ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները՝ ըստ ոլորտների և վարչատարածքային միավորների, և դուրս բերել դրանցում նկատվող որակական դրսևորումները,
- հետազոտել տնտեսության որակի ընդհանուր բնութագիրը, ուսումնասիրել դրա վերաբերյալ մասնագիտական գրականության անդրադարձը, դրա գնահատման միջազգային փորձը և մոտեցումները, ձևավորել տնտեսական երևույթների և ցուցանիշների այնպիսի համակարգ, որը համալիր կերպով կնկարագրի տնտեսության որակական նկարագիրը,
- գնահատել և վերլուծել ՀՀ տնտեսության որակն ու դրա դինամիկան,
- բացահայտել ՀՀ տնտեսական աճի և դրա որակի միջև խզումը,
- մոդելավորել տնտեսության որակը, ստացված մոդելը կիրառել ՀՀ նյութերով և դրա միջոցով աջակցել տնտեսության որակի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսությունն է: Հետազոտության առարկան ՀՆԱ արտադրության արդյունավետության գնահատումն է:

Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում կիրառվել են ընդհանուր և հատուկ մասնագիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են համեմատության, չափման, վերացարկման, վերլուծության, համադրության, մաթեմատիկական և տնտեսաչափական մոդելավորման մեթոդները: Առաջադրված խնդիրների լուծման համար հիմք են հանդիսացել տարբեր հեղինակների և միջազգային կազմակերպությունների՝ սոցիալական, տնտեսական, ֆինանսական և աշխարհաքաղաքական տարբեր հիմնահարցերին վերաբերող հոդվածները և զեկույցները: Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել ՀՀ վիճակագրական կոմիտեի, Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Կայուն զարգացման լուծումների ցանցի, Լեգաթում վերլուծական կենտրոնի, Համաշխարհային փոփոխության տվյալների լաբորատորիայի, Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող պաշտոնական տվյալները, նյութերը, էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրները և տվյալների բազաները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքում ստացվել են տեսական, մեթոդաբանական և գործնական արժեք ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ՝ առանձնանում են հետևյալները.

1. Պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար Մալմքվիսթի համաթվի և ստոխաստիկ

սահմանի մոդելի կիրառմամբ գնահատվել է ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը:

2. Մալմքվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականության կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները:
3. Որոշվել է ՀՀ տնտեսության ճյուղային, ներճյուղային և տարածքային կենտրոնացվածության մակարդակներն ու գնահատվել դրանց փոխառնչությունը երկրի ՀՆԱ ծավալների փոփոխություններին:
4. Մշակվել է տնտեսական արդյունքի որակի համաթվի հաշվարկման մեթոդաբանություն, որի հիման վրա գնահատվել է ՀՀ տնտեսության որակը, դրա դինամիկան, կայունությունը և կառուցվածքը:
5. Մշակվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել, որը հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում, ինչպես նաև տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար մշակել հասցեական լուծումներ: Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար մշակված համաթվի և մոդելի հիման վրա ստեղծվել է առցանց հարթակ, որտեղ կարելի է նաև իրականացնել համապատասխան սիմուլյացիաները և հետևել համակարգի վարքագծի փոփոխություններին:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսությունում ներկայացված ուսումնասիրությունները, գնահատականները, առաջադրված սիմուլյացիոն մոդելավորման գործիքը և առաջարկությունները ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն ունեն: ՀՀ տնտեսության որակի գնահատումը և այդ համատեքստում ՀՆԱ արտադրության արդյունավետության վերլուծությունը կարևոր նշանակություն ունեն երկրում տնտեսական իրականության ուսումնասիրության և քաղաքականության մշակման և իրականացման տեսանկյունից:

Աշխատանքի հիմնական արդյունքները կարող են օգտակար լինել տնտեսական քաղաքականության հիմնահարցերն ու խնդիրները հետազոտող մասնագետների և դրանց լուծմանը միտված պետական կառավարման մարմինների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության առանցքային դրույթները քննարկվել և հավանության են արժանացել ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են վեց գիտական հոդվածներում ՝ ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի տեղական և միջազգային ամսագրերում, այդ թվում «Սկոպուս» համակարգում ինդեքսավորված ամսագրում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված խնդիրներով և նպատակով: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված

գրականության ցանկից: Պարունակում է 26 աղյուսակ, 20 գծապատկեր: Շարադրված է համակարգչային 174 էջի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը, խնդիրները, օբյեկտը, առարկան, ներկայացվել են ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթները և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության **առաջին՝ «Տնտեսության արդյունավետության և որակի ուսումնասիրության տեսամեթոդաբանական հարցերն ու գնահատման միջազգային փորձը» գլխում** դիտարկվել են տնտեսական աճի շրջանակներում քննարկվող կարևորագույն հասկացությունները, ներկայացվել «տնտեսական արդյունավետություն» եզրույթի սահմանումները, դրա դասակարգումը, գնահատման մոտեցումները և եղանակները: Այնուհետև դուրս են բերվել տնտեսական արդյունավետության գնահատման միջազգային փորձի հիմնական էմպիրիկ ձեռքբերումները՝ շեշտադրելով աշխատանքի հիմքում ընկած տեսական և մեթոդաբանական հիմնահարցերը, որից հետո ուսումնասիրվել է տնտեսական աճի որակի բնութագիրն ու դրա գնահատման միջազգային փորձը: Հաջորդիվ գնահատվել և վերլուծվել են արտադրության գործոնների նպաստումները տնտեսական աճին և դրանց արտադրողականության մակարդակները:

Առաջին գլխի վերջում մնացորդային եղանակով գնահատվել է ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականությունը (ԸԳԱ), որի միջոցով էլ գնահատվել է տնտեսական արդյունավետության դերը տնտեսության՝ որակական գործընթացներում, մասնավորապես ԸԳԱ-ի և երկրում բարեկեցության, երջանկության, մրցունակության ու եկամուտների անհավասարության մակարդակներ միջև փոխառնչությունները:

Ատենախոսության **երկրորդ՝ «Տնտեսական արդյունավետության և տնտեսական աճի որակի գնահատումը» գլխում** ներկայացվել են տնտեսական արդյունավետության գնահատման տարածված եղանակների մեթոդաբանական սկզբունքները: Հաջորդիվ միջին եկամուտ ունեցող երկրների շրջանակում պարամետրային և ոչ պարամետրային մեթոդներով, մասնավորապես՝ համապատասխանաբար ստոխաստիկ սահմանի մոդելի և Մալմքվիսթի համաթվի կիրառմամբ գնահատվել են ՀՀ՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը (գծապատկեր 1) և դրա աճի տեմպերը (գծապատկեր 2), վերլուծվել է երկրի ԸԳԱ դինամիկան և համեմատվել մյուս երկրների ցուցանիշների հետ: Արդյունքում դուրս են բերվել տնտեսական արդյունավետության համատեքստում ՀՀ՝ մրցակցային հիմնական առավելությունները և հիմնախնդիրները:



Գծապատկեր 1. Միջին եկամուտ ունեցող երկրների՝ ստոխաստիկ սահմանի մոդելի միջոցով ստացված ԸԳԱ միջին մակարդակները[1]

Գնահատված Մալմքվիսթի համաթվի միջոցով դուրս են բերվել ՀՀ ԸԳԱ աճի կառուցվածքը բացատրող քանակական գնահատականները (գծապատկեր 3, 4): Մասնավորապես, Մալմքվիսթի ԸԳԱ համաթվի առաջին կարգի տարանջատումը թույլ է տալիս ԸԳԱ փոփոխությունը (ԸԳԱՓ) բաժանել երկու՝ մեկնաբանման տեսանկյունից բովանդակալից բաղադրիչների՝ տեխնոլոգիական արդյունավետության փոփոխության (ՏԱՓ) և տեխնիկական կամ բուն արտադրության գործընթացը բնորոշող արդյունավետության փոփոխության (ԱՓ): Վերջինս էլ

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են:

բացատրվում է երկու հանգամանքով՝ զուտ արդյունավետության փոփոխությամբ (ԶԱՓ) և մասշտաբից արդյունավետության փոփոխությամբ (ՄԱՓ): Ստացվում է՝

Մալմքվիսթի ԸԳԱ համաթիվ (ԸԳԱՓ) = ՏԱՓ × ԱՓ = ՏԱՓ × ԶԱՓ × ՄԱՓ (1)



Գծապատկեր 2. Միջին եկամուտ ունեցող երկրների՝ Մալմքվիսթի համաթվի միջոցով ստացված ԸԳԱ աճի միջին տեմպերը[2]

[2] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են:



Գծապատկեր 3. ՀՀ ԱՓ, ՏԱՓ և մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ի դինամիկան[3]



Գծապատկեր 4. ՀՀ ՋԱՓ, ՄԱՓ և մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ դինամիկան[4]

Հաջորդիվ Հերֆինդալ-Հիրշմանի համաթվի միջոցով գնահատվել և ուսումնասիրվել են վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները և տեղաշարժերը: Մասնավորապես, գնահատվել են երկրում կենտրոնացվածության մակարդակներն՝ ըստ տնտեսության ճյուղերի (գծապատկեր 5) և վարչա-տարածքային միավորների (գծապատկեր 6), ընդ որում՝ վերջինս և՛ Երևանը ներառյալ, և՛ առանց մայրաքաղաքի կազմերով: Այնուհետև, համադրելով

[3] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են:
[4] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են:

ստացված կենտրոնացվածության գործակիցների և իրական ՀՆԱ դինամիկան՝ դուրս են բերվել կենտրոնացվածության համատեքստում ՀՀ տնտեսությունում դրսևորվող որակական դրական և բացասական երևույթները:



Գծապատկեր 5. ՀՀ տնտեսության կենտրոնացվածության մակարդակի դինամիկան՝ ըստ ճյուղերի[5]



Գծապատկեր 6. ՀՀ տնտեսության կենտրոնացվածության մակարդակների դինամիկան՝ ըստ մարզերի և ք. Երևանի[6]

Հաջորդիվ մշակել ենք տնտեսական աճի որակի գնահատման նոր, ավելի համալիր մոտեցում, քան մինչ օրս իրականացված գնահատականների մեծ մասի հիմքում է, որոնք առավելապես կենտրոնացած են տնտեսական աճի միայն սոցիալական բաղադրիչի վրա: Իհարկե, տնտեսական աճի կարևորագույն

[5] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են, տեղեկատվության աղբյուրներն են՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Տվյալների բազաներ, ArmStatBank, 2023, https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/

[6] Գծապատկերը կառուցվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են:

ասպեկտը հենց սոցիալականն է, սակայն, միայն սոցիալական բաղադրիչով տնտեսական աճի որակը պայմանավորելով, կարծում ենք, որ այն հաշվարկվում է միայն մասամբ: Գտնում ենք, որ աճը որակյալ անվանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև ՀՆԱ-ի ձևավորման նախապայմանները, պատճառները, դրա ձևավորմանն ուղղված ջանքերը, արդյունավետությունը, հետագա աճի համար բարենպաստ պայմաններ ստեղծելու կարողությունը և մակրոֆունդամենտալ տարբեր գործոններ: Մեր կողմից հաշվարկված աճի որակի համաթիվը բացի աճի սոցիալական դրսևորումներից ներառում է նաև աճի որակի վերոնշյալ բնութագրիչները ևս: Այսպես, երկրորդ գլխի վերջում, առաջադրելով տնտեսության որակի գնահատման նկարագրված փուլային մոտեցում, ամեն փուլի համար ձևավորելով համապատասխան ցուցանիշների համակարգ և դրանցից յուրաքանչյուրի կշիռն այդ համակարգում, հավաքագրելով, մշակելով, նորմավորելով և ագրեգացնելով ընտրված ցուցանիշների՝ 2005-2022 թվականների տարեկան տվյալները, 78 երկրի համար հաշվարկվել է տնտեսական արդյունքի որակի համաթիվ (ՏԱՈՀ) (աղյուսակ 1): Վերջինս բաղկացած է երկու ենթահամաթվերից՝ տնտեսական արդյունքի որակի ձևավորման համաթիվ (ՏԱՈՁՀ) և տնտեսական արդյունքի որակի դրսևորման (ՏԱՈԴՀ) համաթիվ:

Աղյուսակ 1

Երկրների ՏԱՈՀ, ՏԱՈՁՀ և ՏԱՈԴՀ արժեքների 2005-2022 թվականների երկրաչափական միջինները և դրանց համապատասխան վարկանիշները[7]

Երկիր	ՏԱՈՁՀ	ՏԱՈԴՀ	ՏԱՈՀ	Երկիր	ՏԱՈՁՀ	ՏԱՈԴՀ	ՏԱՈՀ
Շվեյցարիա	90.49 (1)	79.64 (4)	84.89 (1)	Ռումինիա	28.02 (41)	61.50 (36)	41.51 (40)
Նորվեգիա	85.83 (2)	79.12 (5)	82.41 (2)	Ռուսաստան	28.93 (39)	57.22 (48)	40.69 (41)
Դանիա	81.33 (3)	80.03 (1)	80.68 (3)	Մեքսիկա	27.40 (42)	59.86 (37)	40.50 (42)
Շվեդիա	79.19 (5)	79.64 (3)	79.41 (4)	Հորդանան	24.21 (43)	57.87 (45)	37.43 (43)
ԱՄՆ	80.73 (4)	75.18 (14)	77.91 (5)	Արգենտինա	23.64 (45)	59.00 (40)	37.34 (44)
Ֆինլանդիա	71.72 (7)	79.70 (2)	75.60 (6)	Կոլումբիա	21.95 (47)	57.31 (47)	35.47 (45)
Լյուքսեմբուրգ	74.36 (6)	76.06 (12)	75.21 (7)	Սերբիա	21.68 (48)	57.63 (46)	35.35 (46)
Նիդերլանդներ	68.37 (9)	78.93 (6)	73.46 (8)	Բոտսվանա	23.09 (46)	53.04 (65)	34.99 (47)
Իռլանդիա	68.92 (8)	75.39 (13)	72.08 (9)	Իրան	23.94 (44)	50.82 (68)	34.88 (48)
Գերմանիա	66.53 (10)	77.02 (7)	71.59 (10)	Էկվադոր	21.34 (50)	54.91 (57)	34.23 (49)
Միացյալ	66.21 (12)	76.16 (10)	71.01 (11)	Մարոկկո	21.57 (49)	54.22 (61)	34.20 (50)
Իսլանդիա	65.30 (13)	76.08 (11)	70.48 (12)	Ղազախստան	18.33 (51)	58.84 (41)	32.84 (51)
Ֆրանսիա	66.27 (11)	73.48 (15)	69.78 (13)	Պերու	16.96 (53)	58.07 (44)	31.38 (52)
Կանադա	62.01 (15)	76.41 (9)	68.84 (14)	Ադրբեջան	16.85 (54)	55.79 (56)	30.66 (53)
Նոր Զելանդիա	60.95 (16)	76.44 (8)	68.25 (15)	Ինդոնեզիա	15.63 (56)	58.28 (42)	30.18 (54)
Իսրայել	63.46 (14)	69.99 (18)	66.65 (16)	Մոլդովա	15.86 (55)	56.71 (51)	29.99(55)
Իտալիա	56.47 (17)	67.82 (21)	61.89 (17)	Եգիպտոս	17.82 (52)	50.44 (69)	29.98 (56)
Իսպանիա	53.00 (18)	70.14 (16)	60.97 (18)	Ալբանիա	15.40 (57)	57.09 (50)	29.65 (57)
Սլովենիա	49.57 (19)	69.39 (19)	58.65 (19)	Վրաստան	15.27 (58)	56.56 (53)	29.38 (58)
Պորտուգալիա	46.12 (20)	67.36 (22)	55.74 (20)	Ֆիլիպիններ	14.57 (59)	56.08 (54)	28.59 (59)
Չեխիա	44.24 (22)	70.14 (17)	55.71 (21)	Հայաստան	13.97 (60)	56.56 (52)	28.11 (60)

[7] Աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից, հաշվարկները հեղինակային են: Փակագծում նշված թվերը համապատասխան երկրների՝ վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքերն են՝ ըստ համապատասխան ցուցանիշի: Երկրները դասավորված են ՏԱՈՀ նվազման կարգով:

Երկիր	ՏԱՈՁՀ	ՏԱՈԴՀ	ՏԱՈՀ	Երկիր	ՏԱՈՁՀ	ՏԱՈԴՀ	ՏԱՈՀ
Էստոնիա	43.99 (23)	69.32 (20)	55.22 (22)	Գաբոն	13.68 (61)	49.77 (72)	26.10 (61)
Կիպրոս	45.21 (21)	66.64 (23)	54.89 (23)	Հնդկաստան	12.52 (62)	53.41 (64)	25.86 (62)
Հունաստան	40.89 (24)	62.87 (34)	50.70 (24)	Սենեգալ	9.72 (63)	51.23 (67)	22.32 (63)
Սլովակիա	38.26 (27)	66.46 (24)	50.43 (25)	Ուկրաինա	8.23 (65)	55.96 (55)	21.46 (64)
Խորվաթիա	39.30 (25)	63.31 (33)	49.88(26)	Այժիր	8.31 (64)	53.54 (62)	21.09 (65)
Հունգարիա	38.89 (26)	63.69 (32)	49.77 (27)	Շրի Լանկա	7.91 (66)	54.52 (60)	20.77 (66)
Լատվիա	36.02 (28)	64.92 (29)	48.36 (28)	Մոնղոլիա	7.44 (68)	54.68 (59)	20.17 (67)
Լիտվա	35.52 (30)	65.79 (27)	48.34 (29)	Գանա	7.69 (67)	52.49 (66)	20.09 (68)
Չիլի	34.57 (32)	66.41 (25)	47.91 (30)	Գվատեմալա	6.99 (70)	54.87 (58)	19.59 (69)
Լեհաստան	34.53 (33)	66.19 (26)	47.81 (31)	Քենիա	7.07 (69)	50.09 (70)	18.81 (70)
Մալայզիա	35.07 (31)	64.76 (30)	47.65 (32)	Զամբիա	5.50 (71)	47.68 (74)	16.20 (71)
Սաուդյան Արաբիա	35.66 (29)	58.16 (43)	45.54 (33)	Պակիստան	4.16 (72)	47.23 (76)	14.01 (72)
Կոստա Ռիկա	31.32 (37)	65.06 (28)	45.14 (34)	Ղրղզստան	1.86 (73)	53.42 (63)	9.98 (73)
Ուրուգվայ	30.93 (38)	63.93 (31)	44.47 (35)	Նեպալ	1.43 (74)	50.03 (71)	8.45 (74)
Թուրքիա	34.52 (34)	57.16 (49)	44.42 (36)	Մյանմար	0.71 (75)	45.13 (77)	5.68 (75)
Չինաստան	33.27 (35)	59.17 (39)	44.37 (37)	Տանզանիա	0.60 (76)	47.46 (75)	5.35 (76)

Ատենախոսության **երրորդ՝ «ՀՀ տնտեսության որակի վերլուծությունը և դրա բարելավման պլանավորումը» գլխում** վերլուծվել են ՀՀ ՏԱՈՀ դինամիկան, աճի տեմպերը, կայունությունը, կառուցվածքը և դրանում դրսևորվող անհամաչափությունները, ընդ որում՝ այս ամենը ոչ միայն առանձին ՀՀ ցուցանիշների կտրվածքով, այլև դիտարկվող բոլոր երկրների, առաջատարների և ամենացածր վարկանիշ ունեցողների, ՀՀ հարևան երկրների, ինչպես նաև շնչի հաշվով ՀՆԱ գրանցած ՀՀ-ին հարակից երկրների շրջանում: Գնահատված համաթիվը համադրվել է Հայաստանի ՀՆԱ-ի հետ, դուրս են բերվել դրանց միտումներն ու տարբերությունները:

Աղյուսակ 2

Իմիտացիաները և դրանց արդյունքում դրսևորվող համակարգի վարքագիծը[8]

Իմիտացիա	Համակարգի վարքագիծ	
$\Delta x_{ij} = a$ (միավոր)	$\Delta ՏԱՈՀ = ՏԱՈՀ \times \left[\left(\frac{x_{ij} + a - x_{min}}{x_{ij} - x_{min}}\right)^{\frac{w_j}{2}} - 1\right]$, (միավոր)	(2)
$\Delta x_{ij} = a$ (%)	$\Delta ՏԱՈՀ = \left(\frac{\left(1 + \frac{a}{100}\right) \times x_{ij} - x_{min}}{x_{ij} - x_{min}}\right)^{\frac{w_j}{2}} \times 100 - 100$, (%)	(3)
$\Delta ՏԱՈՀ = a$ (միավոր)	$\Delta x_{ij} = (x_{ij} - x_{min}) \times \left[\left(1 + \frac{2a \times ՏԱՈՀ_i + a^2}{ՏԱՈՀ_i^2}\right)^{\frac{1}{w_j}} - 1\right]$, (միավոր)	(4)
$\Delta ՏԱՈՀ = a$ (%)	$\Delta x_{ij} = \left(100 - \frac{100 \times x_{min}}{x_{ij}}\right) \times \left[\left(1 + \frac{200 \times a + a^2}{10000}\right)^{\frac{1}{w_j}} - 1\right]$, (%)	(5)

Հաջորդիվ մշակված համաթվի մեթոդաբանական հենքով կառուցվել է տնտեսության որակի սիմուլյացիոն մոդել (աղյուսակ 2), որը մի կողմից հնարավորություն է տալիս դիտարկել երկրի տնտեսության որակի փոփոխությունները իմիտացված տարբեր շոկերի պարագայում: Ներկայիս ՀՀ տնտեսության որակի վրա սիմուլյացվել են երկրում գրանցված երեք հիմնական

[8] Աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից, նշանակումները ներկայացված են աղյուսակ 3-ում

տնտեսական շոկերը՝ 2008 թ-ի՝ համաշխարհային ֆինանսատնտեսական, 2014 թվականի արժութային, 2020 թվականի համավարակով և Արցախյան պատերազմով պայմանավորված ճգնաժամերը, այնուհետև դիտարկվել են դրանց արդյունքում ՀՀ տնտեսության որակի փոփոխությունները:

Աղյուսակ 3

Սիմուլյացիոն մոդելում կիրառված նշանակումները[9]

Նշանակում	նշանակություն
i	երկրի ցուցիչ
$ՏԱՈՀ_i$	i-րդ երկրի ՏԱՈՀ
$ՏԱՈՁՀ_i$	i-րդ երկրի ՏԱՈՁՀ
$ՏԱՈԴՀ_i$	i-րդ երկրի ՏԱՈԴՀ
n	երկրների քանակ
j	ցուցանիշի ցուցիչ
m	ցուցանիշների քանակ
x_{ij}	i-րդ երկրի j-րդ ցուցանիշի բացարձակ (չնորմավորված) արժեք
x_{max}	j-րդ փոփոխականի վերին սահման
x_{min}	j-րդ փոփոխականի ստորին սահման
w_j	j-րդ ցուցանիշի կշիռ

Մյուս կողմից մշակված մոդելը հնարավորություն է տալիս հասցեական լուծումներ մշակել տնտեսության որակի բարելավման քաղաքականության համար: Մասնավորապես աղյուսակ 4-ում ներկայացված է 3 տարում ՀՀ տնտեսության որակի ավելի քան 24%-ով բարելավման ծրագիր, որի արդյունքում այլ հավասար պայմաններում ՀՀ ՏԱՈՀ-ն հնարավոր կլինի ընդհուպ մոտեցնել դիտարկված 78 երկրների միջինին, և վարկանիշային աղյուսակում երկիրը 59-րդ հորիզոնականից կբարձրանա 45-րդ: Մասնավորապես հաստակ նկարագրվել է, թե ՏԱՈՀ թիրախային մակարդակին հասնելու համար յուրաքանչյուր տարում տնտեսության որակի աճի ինչպիսի կառուցվածք պետք է ապահովել: Աղյուսակում յուրաքանչյուր վանդակ ցույց է տալիս համապատասխան տարվա ՏԱՈՀ թիրախային արդյունք ապահովելու համար յուրաքանչյուր ցուցանիշի գծով տոկոսային անհրաժեշտ հավելաճը:

Աղյուսակ 4

Սիմուլյացիոն մոդելի կիրառման արդյունքում ՏԱՈՀ հավելաճերը (%) և դրանց հասնելու համար անհրաժեշտ աճի կառուցվածքները (տոկոսներով) t+1, t+2 և t+3 ժամանակահատվածներում[10]

Ցուցանիշ	t+1	t+2	t+3
ՏԱՈՀ	7.51	7.12	7.56
ածխաթթու գազի արտանետումներ (մետրական տոննա մեկ շնչի հաշվով)	-38.14	-28.18	-19.26
մասնավոր հատվածի ներքին վարկավորում (ՀՆԱ-ի տոկոս)	12.55	12.31	13.58

[9] Աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից

[10] Աղյուսակը կառուցվել է հեղինակի կողմից, տեղեկատվական հենքը հեղինակային հաշվարկներն են, որոնք իրականացվել են հեղինակային առցանց գործիքի միջոցով՝ https://navasardianmichael.github.io/egqi

Ցուցանիշ	t+1	t+2	t+3
մեկ շնչի հաշվով ՀՆԱ (հաստատուն գներով)	5.21	5.80	6.58
Ջինի գործակից	-3.77	-2.70	-2.54
համաշխարհային մրցունակության համաթիվ	6.10	4.52	4.18
կրթությանն ուղղված պետական ծախսեր (ՀՆԱ-ի տոկոս)	7.07	9.83	13.66
հիմնական կապիտալի համախառն կուտակում (հաստատուն գներով) մեկ միավոր աշխատուժի հաշվով	8.60	9.66	12.19
երջանկության համաթիվ	10.19	8.66	5.91
արտահանման շուկաների համակենտրոնացման՝ Հերֆինդալ-Հիրշմանի համաթիվ	-17.42	-18.44	-19.97
մշակող արդյունաբերության ավելացված արժեքի մեջ միջին և բարձր տեխնոլոգիաների միջոցով ստացված ավելացված արժեքի մասնաբաժին (տոկոս)	20.91	24.12	31.65
բարեկեցության համաթիվ	1.86	1.98	2.27
հետազոտություններին և մշակումների վրա կատարված ծախսեր (ՀՆԱ-ի տոկոս)	19.26	22.62	26.18
ՀՆԱ արտադրության արդյունավետություն (0-100, ստոխաստիկ սահմանի մեթոդ)	1.78	0.12	0.15

Տնտեսական արդյունքի որակի մշտադիտարկման համար ստեղծվել է առցանց հարթակ[11], որը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել դիտարկված երկրների ցանկը, արդյունքներն ու վարկանիշները, տնտեսության որակի տեսանկյունից դրանց ուժեղ և թույլ կողմերը, ներբեռնել համաթվերի ու դրանց բաղադրիչների դինամիկ շարքերը: Գործիքը սնվում է դինամիկ տվյալներով, այսինքն՝ կարելի է հետագայում՝ նոր տվյալների հրապարակումից հետո դրանք վերբեռնել ծրագրի մեջ և դիտարկել արդյունքներն արդեն նոր թվերով: Կարելի է նաև փոփոխել համաթվի բաղադրիչների ցանկը, դրանց կշիռները, ցենտիլները և նորմավորման սահմանները: Այդպիսով, առանց մեթոդաբանական և ժամանակագրական սահմանափակումների, տնտեսության որակի դիտարկումը ավտոմատացվում է: Մյուս կողմից առաջադրված սիմուլյացիոն մոդելի միջոցով, կանխավ սահմանելով որոշակի նպատակ, որոշելով այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ աճի քաղաքականության իրականացման որոշակի ժամակահատված և կառուցվածքի որոշակի օրինաչափություն, յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կարելի է ստանալ որոշված վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ աճի հստակ կառուցվածք:

Ատենախոսության **եզրակացություններում** ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, ինչպես նաև կատարվել են առաջարկություններ՝ ուղղված ՀՀ տնտեսության արդյունավետության և որակի բարելավմանը:

Մնացորդային եղանակով հաշվարկելով ՀՀ ընդհանուր գործոնային արտադրողականությունը, դրա նպաստումը տնտեսական աճին, և համադրելով այն աճի որակական դրսևորումների հետ՝ կարող ենք փաստել, որ արդյունավետությունը ՀՀ ՀՆԱ տնտեսական աճերը և անկումները պայմանավորող հիմնական գործոնն է:

[11] Navasardyan M., Economic Output Quality index, 2024, https://navasardianmichael.github.io/egqi

Միջին եկամուտ ունեցող երկրների՝ ՀՆԱ արտադրության արդյունավետությունը և վերջինիս բաղադրիչները գնահատելու արդյունքում հանգել ենք ստորև ներկայացված **եզրակացություններին:**

- 2000-2021 թթ.-ին միջին եկամուտ ունեցող երկրների շրջանում ՀՀ-ն միջինում ՀՆԱ արտադրության գործընթացում արդյունավետության (ստոխաստիկ սահմանի մոդել)՝ միջինից էլ ցածր ցուցանիշ է գրանցել՝ տեղ գտնելով վերջին տասնյակում, սակայն դրա աճի տեմպի մասով (Մալմքվիստի ԸԳԱ համաթիվ) երկրի զբաղեցրած դիրքը հուսադրող է (18-րդ):
- ՀՀ ՀՆԱ արտադրության արդյունավետության աճի բարձր տեմպն առավելապես պայմանավորված է տեխնիկական արդյունավետությամբ, մինչդեռ մասշտաբից արդյունավետության զարգացումները չնչին են, իսկ տեխնոլոգիական արդյունավետության փոփոխությունը միջինում բացասական է: Գնահատելով ՀՀ տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները և տեղաշարժերը՝ ըստ տնտեսության ճյուղերի և վարչատարածքային միավորների, կատարել ենք մի քանի կարևոր հետևություն:
- ՀՀ տնտեսական արդյունքի, զբաղվածների և միջին ամսական աշխատավարձի կենտրոնացվածության մակարդակները՝ ըստ ճյուղերի, վերջին տասնամյակի ընթացքում բարձրացել են, մասնավորապես տնտեսական ակտիվության՝ գյուղատնտեսությունից դեպի ծառայություններ տեղափոխման հաշվին: Այս միտումներին զուգընթաց երկրում տնտեսական արդյունքը բարելավվում է, որը սպառնում է, որ ծնագնդի էֆֆեկտով տնտեսական մյուս ցուցանիշների գծով կենտրոնացվածությունն էլ ավելի կաճի:
- Տնտեսության ճյուղերի ներսում, ինչպես նաև արտահանման և ներմուծման՝ ըստ ապրանքախմբերի կառուցվածքներում, կենտրոնացվածությունը կա՛մ ցածր է, կա՛մ՝ չափավոր, իսկ ՀՆԱ-ի հետ տարամիտում է, որը տնտեսության որակի տեսանկյունից դրական ցուցիչ է:
- Վերջին տասնամյակի ընթացքում հանրապետության մասշտաբով տնտեսության՝ Երևանում կենտրոնացվածության բավականին բարձր աստիճան է արձանագրվել: Առաջադրելով տնտեսության որակի գնահատման «ձևավորման և դրսևորումների» մոտեցման սկզբունքով հաշվարկված տնտեսական արդյունքի որակի համաթիվը, և ամփոփելով վերջինիս վերլուծությունը ՀՀ-ում՝ ամփոփ ներկայացնենք հիմնական եզրակացությունները և առանձնացնենք ՀՀ՝ տնտեսական արդյունքի որակին բնորոշ առանձնահատկությունները:
- Հայաստանը տնտեսության որակի վարկանիշային աղյուսակում 28.1 միավորով, որը ուսումնասիրված 78 երկրների գրանցած միջին արժեքից էլ ցածր է, տեղ է գտել 60-րդ հորիզոնականում: Ընդ որում երկրի դիրքը, ըստ նույն ցուցանիշի, ցածր է նաև մեկ շնչի հաշվով ՀՆԱ գրանցած

հարակից 5-ական երկրների կազմում՝ 7-րդ, իսկ հարևան երկրների շրջանակում գրանցել է ամենացածր արդյունքը:

- Զարգացած երկրներում տնտեսության ձևավորած որակի աճը շատ ավելի արդյունավետորեն է փոխարկվում որակի դրսևորման, քան հետնապահ երկրներում: Այս համատեքստում ՀՀ տնտեսական վարքագիծը շատ ավելի մոտ է հետնապահների բնութագրին:
- Հետճգնաժամային տարիներին (ի նկատի ունենալով 2008, 2014 և 2020 թվականների ճգնաժամերը) երկրի տնտեսության որակի որոշակի փոփոխությունների օրինաչափություններ են նկատվում: Նախ՝ նվազում է մասնավոր հատվածին ուղղված ներքին վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ, որը վկայում է կառավարության՝ հակաճգնաժամային միջոցառումների ընդլայնման անհրաժեշտության մասին: Բարձրանում է եկամուտների անհավասար բաշխվածության մակարդակը, որը համադրելով նաև հետճգնաժամային տարիներին բնակչության ամենաղքատ դեցիլի՝ ընդհանուր սպառման մեջ մասնաբաժնի նվազման միտումների հետ՝ կարող ենք եզրակացնել, որ այդ տարիներին առավելապես տուժում է համեմատաբար ցածր եկամտային խմբերում ընդգրկված բնակչությունը: Այս ամենի հետևանքով անկում են ապրում նաև տնտեսության որակի սոցիալական կոմպոնենտները՝ բարեկեցության և երջանկության մակարդակները:
- ՀՀ տնտեսական արդյունքի որակի ձևավորման և դրսևորման փուլերում գրանցված արդյունքների միջև տարբերությունը բավականին խորն է. առավել էական խնդիրները կապված են որակի ձևավորման հետ:
- Հայաստանի՝ տնտեսության որակի թույլ կողմերն են՝ մշակող արդյունաբերությունում տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակը, կրթությանը, հետազոտություններին և մշակումներին ուղղված ծախսերի ցածր մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ, մեկ շնչի հաշվով եկամտի և կապիտալազինվածության ցածր մակարդակները:
- Երկրի՝ տնտեսության որակի մրցակցային առավելություններն են՝ ձևավորված եկամտի միավորի հաշվով ածխաթթու գազի արտանետումների ցածր մակարդակը, մասնավոր հատվածի վարկավորման բարձր և եկամուտների բաշխման անհավասարության ցածր մակարդակները:
- ՀՀ տնտեսության որակի աճը միջինում ավելի քան կրկնակի դանդաղ է, քան իրական ՀՆԱ-ի աճը:
- Ըստ տնտեսական արդյունքի որակի աճի տեմպերի՝ ուսումնասիրված երկրների շրջանում երկիրը 1.8%-ով, որը միջինից ցածր է 0.28 տոկոսային կետով, զբաղեցնում է 23-րդ տեղը, ՀՆԱ աճ գրանցած հարակից 5-ական երկրների կազմում՝ 7-րդը, իսկ հարևան երկրներից զիջում է միայն Վրաստանին:
- Ուսումնասիրված երկրների համեմատ, ՀՀ զբաղեցրած դիրքը (53-րդ), ըստ տնտեսական արդյունքի որակի աճի կայունության մակարդակի,

ցուցում է երկարաժամկետում երկրի տնտեսության որակյալ աճի ռիսկային տատանումների մասին:

- Ենթահամաթվերի ներսում կենտրոնացվածությունը բավականին բարձր է, հատկապես ՏԱՈՁՀ կառուցվածքի մեջ: Ըստ ՏԱՈՁՀ կառուցվածքի ապակենտրոնացվածության աստիճանի՝ երկիրը 78-ից 71-րդն է:
- 3 տարվա ընթացքում այլ հավասար պայմաններում ՀՀ տնտեսության որակը հնարավոր է ընդհուպ մոտեցնել դիտարկված 78 երկրների միջինին՝ ըստ մեր կողմից առաջարկված առաջնահերթությունների մոտեցման՝ պահպանելով աշխատանքում ներկայացված սիմուլյացիոն մոդելի միջոցով հաշվարկված աճի հստակ կառուցվածքը:

Ամփոփելով իրականացված հետազոտությունը, դրա արդյունքում ձևավորված հիմնական մեկնաբանությունները, հետևությունները, տրված գնահատականների կիրառման արդյունքները և եզրակացությունները՝ կարող ենք կատարել հետևյալ **առաջարկությունները**:

- Տնտեսական արդյունավետությունը և այդպիսով տնտեսական աճն օպտիմալացնելու համար երկիրը կարիք ունի արտադրության սահմանի ընդլայնման և մասշտաբից արդյունավետության ակտիվացման:
  - ✓ Արտադրության սահմանի ընդլայնման համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետազոտությունների և մշակումների զարգացմանը, ֆորմալ կրթության և մասնավոր հատվածի ինտեգրմանը, կադրային քաղաքականությանը: Մասնավորապես առաջարկում ենք ընդլայնել համալսարանների հետազոտական ներուժը, հիմնել ամբիոններ և հետազոտական կենտրոններ՝ տնտեսության առջև ծառացած իրական մարտահրավերները ուսումնասիրելու և որակական փոփոխություններ առաջադրելու համար, ընդլայնել երկրի՝ սոցիալ-տնտեսական տվյալների հավաքագրման մասշտաբները և ապահովել դրանց հասանելիությունը հասարակության լայն զանգվածներին, որպեսզի հնարավոր դառնան հետազոտությունների նոր մեթոդների տեղայնացումը և ՀՀ տնտեսության համար որակական նոր բնութագրիչների գնահատումը:
  - ✓ Մշակել արդյունաբերական պարկեր, որոնք միավորում են տարբեր ոլորտների բիզնեսները՝ խթանելով նորարարությունն ու մասնագիտացումը:
  - ✓ Մասշտաբից արդյունավետության գծով պետք է առաջադրել ծրագրեր, որոնցով փոքր, ոչ արդյունավետ ձեռնարկությունները կհամախմբվեն ավելի մեծ կազմակերպություններում՝ երկրի տնտեսական ներուժը չմարելու և մասշտաբից արդյունավետությունը խթանելու նպատակով:
- ՀՀ տնտեսության կենտրոնացվածությունը, ըստ տնտեսության ոլորտների և վարչատարածքային միավորների, որոշ ցուցանիշների

դեպքում բավականին կենտրոնացված է և նշանակալի կապ ունի ՀՆԱ-ի հետ: Աճը ներառական դարձնելու համար առաջարկում ենք՝

- ✓ հարկային խթանների, պարզեցված կանոնակարգերի, ենթակառուցվածքների զարգացման միջոցով աջակցել փոքր և միջին ձեռնարկություններին՝ նոր շուկաներ բացահայտելու և դրանք մարզերում տեղաբաշխելու նպատակով,
- ✓ դիվերսիֆիկացնել և խթանել զբոսաշրջային գործունեությունը մարզերում՝ ընդգծելով եզակի մշակութային, պատմական կամ բնական գրավչությունները: Կազմակերպել մշակութային միջոցառումներ և փառատոններ, որոնք կցուցադրեն տարածաշրջանի յուրահատկությունը և կգրավեն այցելուներին:

- Տնտեսության որակի բարելավման համատեքստում ջանքերն ուղղել դրա կառուցվածքի հավասարակշռմանը, մասնավորապես բարձրացնել կրթությանը, ինչպես նաև հետազոտություններին և մշակումներին ուղղված ծախսերի՝ ՀՆԱ-ի մեջ մասնաբաժնի ավելացմանը, տեղայնացնել մշակող արդյունաբերության մեջ բարձր տեխնոլոգիաների կիրառման միջազգային փորձը:
- Պետական ծախսերի ծրագրերի մեջ խարսխել տնտեսության որակի որոշակի մակարդակ և հետևել դրա կատարմանը:
- Առաջարկվում է տնտեսության որակական կողմն ուսումնասիրելու համար պետական մարմիններում ներդնել համակցված ցուցանիշների ավտոմատ հաշվարկման ծրագրային ապահովում, որը թույլ կտա՝

- ✓ ավտոմատացնել ուսումնասիրվող ժամանակահատվածի համար կատարվող հաշվարկները՝ այդպիսով նվազեցնելով մարդկային սխալի գործոնը, խնայել ժամանակային, կադրային և ֆինանսական ռեսուրսները, ջանքերը կենտրոնացնել ստացված արդյունքների վերլուծության վրա,
- ✓ իմիտացնել տարբեր տնտեսական շոկեր և ճգնաժամեր, գնահատել հնարավոր կամ պլանավորված պետական միջոցառումների և քաղաքականության արդյունքները, ուսումնասիրել երկրի տնտեսական վարքագիծը,
- ✓ նախապես սահմանել տնտեսության որակի բարելավման որոշակի նպատակ-վերջնարդյունք, որոշել դրան հասնելու համար պահանջվող աճի որակի կառուցվածքը և սիմուլյատիվ փորձարկումների միջոցով պարզել, թե որքանով է այն իրատեսական և ինչպիսի կառուցվածքով կարելի է հասնել որակի թիրախավորված մակարդակին:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. Navasardyan M., The role of efficiency in the economic growth quality generation and manifestation processes, 2022, №3, pp. 134-141, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2022_3_134_141.pdf
2. Navasardyan M., Comparison of the centralization of the RA economy with the economic result, Region and the World, 2023, №3, pp. 134-139, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2023_3_134_139.pdf
3. Mkrtchyan T., Navasardyan M., Assessing Economic Growth Quality, International Journal of Professional Business Review, 2023, 8(7), e02810. https://doi.org/10.26668/businessreview/2023.v8i7.2810
4. Մկրտչյան Թ., Նավասարդյան Մ., Հայաստանի տնտեսական արդյունավետության պարամետրային և ոչ պարամետրային գնահատումը, «Տարածաշրջան և աշխարհ», 2024, №1 (50), pp. 147-157, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_1_147_157.pdf
5. Navasardyan M., Modeling the Quality of Economic Growth: A Case Study of Armenia, Region and the World, 2024, №2 (51), pp. 140-149, https://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2024_2_140_149.pdf
6. Mkrtchyan T., Navasardyan M., Qualitative Dimensions of Economic Growth: A New Perspective, Proceedings on Engineering Sciences, 2024, 6(2), pp. 863-874, DOI: 10.24874/PES06.02A.013, https://pesjournal.net/paper.php?id=569

НАВАСАРДЯН МИКАЕЛ АРМЕНОВИЧ

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ПРОИЗВОДСТВА ВВП В КОНТЕКСТЕ УЛУЧШЕНИЯ КАЧЕСТВА ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА (ПО МАТЕРИАЛАМ РА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – «Экономика, управление хозяйством и его сферами».

Защита диссертации состоится 05-ого августа 2024 года, в 14^{00}, на заседании Специализированного совета 008 КВОН РА по экономике при Российско-Армянском университете. Адрес: РА, 0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123.

РЕЗЮМЕ

Исследуя современную экономическую реальность, экономисты сталкиваются с различными эмпирическими доказательствами, подтверждающими разрыв между экономическим ростом и ростом уровня благосостояния общества. В то же самое время, расчет, таргетирование и планирование экономического роста не являются самоцелью: они направлены на повышение уровня благосостояния общества, а также на создание новых возможностей для устойчивого роста. Примечательно также и то, что усилия научных исследователей все больше направлены на поиск эффективных методов оценки и улучшения качества экономического роста. В этом контексте изучение экономической эффективности и ее проявлений особенно важно, поскольку в современном мире наибольший вклад в экономический рост вносит именно эффективность.

Целью исследования являются анализ и оценка качества экономического роста Армении и эффективности производства ВВП.

Исходя из поставленной цели, в исследовании был определен и решен ряд задач.

- Изучить международный опыт оценки экономической эффективности, выявить наиболее распространенные подходы и методы данной оценки, и оценить с их помощью эффективность производства ВВП РА, его динамики и структуры.
- Выявить структурные особенности экономики РА по отраслям и административно-территориальным единицам и выявить наблюдаемые в них качественные проявления.
- Исследовать общие характеристики качества экономического роста, изучить специализиованную литературу, посвященную данной тематике,

международный опыт и подходы к оценке качества экономического роста, сформировать такую систему экономических показателей, которая даст комплексное описание качества экономического роста.

- Оценить и проанализировать качество экономики РА и ее динамику.
- Выявить разрыв между экономическим ростом РА и его качеством.
- Создать модель, описывающую качество экономики, применить полученную модель на метериалах РА и выработать на основе полученных результатов рекомендации по совершенствованию политики улучшения качества экономики.

Из выводов, сделанных на основе исследования и эмпирического анализа, можно выделить следующие результаты, имеющие теоретическое и практическое значение, содержащие элементы **научной новизны.**

1. С использованием параметрических и непараметрических методов, а именно, стохастической модели производственных границ и индекса Мальмквиста, соответственно, была оценена эффективность производства ВВП Республики Армения.
2. С помощью индекса Мальмквиста были выведены количественные оценки, объясняющие структуру общей факторной производительности РА.
3. Определены уровни отраслевой, внутриотраслевой и территориальной концентрации экономики Республики Армения, а также оценена их взаимосвязь с изменением объемов ВВП страны.
4. Разработана методика расчета индекса качества экономического результата, на основе которой было оценено качество экономики РА, его динамика, устойчивость и структура.
5. Разработана имитационная модель качества экономики, позволяющая наблюдать за изменением качества экономики страны в случае различных имитируемых шоков, а также дающая возможность выработать четко определенный проект политики по улучшению качества экономики. Для мониторинга качества экономического роста была создана онлайн-платформа, на которой также можно проводить соответствующие симуляции и отслеживать изменения поведения системы.

MIKAYEL ARMEN NAVASARDYAN

ASSESSMENT OF THE EFFICIENCY OF GDP PRODUCTION IN THE CONTEXT OF IMPROVING THE QUALITY OF ECONOMIC GROWTH (ON THE MATERIALS OF THE RA)

Abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 – «Economics, Management of the Economy and its Spheres».

The defense of the thesis will take place on the 05th of August, 14^{00}, at 008 Council of Economics of the HESC RA at Russian-Armenian University. Address: 123 Hovsep Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

In exploring modern economic reality, economists face with various empirical evidence confirming the gap between economic growth and social well-being. Calculation, targeting and planning of economic growth are not an end in themselves: they are aimed at increasing the level of well-being of society, as well as creating new opportunities for sustainable growth. Consequently, scientific efforts are primarily focused on assessing and enhancing the qualitative dimensions of growth, rather than its quantitative aspects. In this context, the study of economic efficiency and its manifestations is especially important, since in the modern world, efficiency makes almost the greatest contribution to economic growth.

The aim of the research is the analysis and assessment of the efficiency of GDP production and the quality of economic growth in Armenia.

Based on the stated goal, a number of tasks were identified and solved in the study.

- Study international experience in assessing economic efficiency, identify the most common approaches and methods, use them to evaluate the efficiency of GDP production of the RA, its dynamics and structure.
- Identify the structural features of the RA economy by economic sectors and administrative-territorial units, identify the qualitative manifestations observed in them.
- Research the general characteristics of the quality of economic growth, study professional literature, international experience and approaches to its assessment, form a system of economic indicators that will comprehensively describe the profile of the quality of economic growth.
- Assess and analyze the quality of the RA economy and its dynamics.

- Identify the gap between the economic growth of the Republic of Armenia and its quality.
- Model the quality of the economy, apply the resulting model with RA materials and through it support the development of policies aimed at improving the quality of the economy.

From the conclusions made on the basis of the research and empirical analysis, the following results can be identified, which have theoretical and practical significance and contain elements of **scientific novelty.**

1. Using parametric and non-parametric approaches, in particular, the stochastic frontier model and the Malmquist index, the production efficiency of the RA GDP was assessed.
2. Quantitative estimates explaining the structure of total factor productivity of the Republic of Armenia were obtained using the Malmquist index.
3. The levels of sectoral, intra-sectoral and territorial concentration of the economy were determined and their correlation with changes in GDP volumes was assessed.
4. A methodology was developed for calculating the quality index of the result of economic activity, on the basis of which the quality of the RA economy, its dynamics, stability and structure was assessed.
5. A simulation model of the quality of the economic output has been constructed, which makes it possible to observe changes in the quality of the country's economy in the event of various simulated shocks, as well as to process targeted decisions on policies to improve the quality of the economy. To monitor the quality of economic output, an online platform has been developed, on which one can also conduct relevant simulations and and track qualitative changes in the economy of the observed country.